ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 15 -Լ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍՈՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍՈՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 55-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 24-րդ հոդվածի 4.3-րդ մասի համաձայն.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել՝

1) նյութական վնասով ճանապարհատրանսպորտային պատահարի մասին արձանագրության ձևը՝ համաձայն հավելված 1-ի.

2) նյութական վնասով ճանապարհատրանսպորտային պատահարի հանգամանքների տեխնիկական ելակետային տվյալների կազմի ու կառուցվածքի նկատմամբ պահանջները՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սահմանել, որ նյութական վնասով ճանապարհատրանսպորտային պատահարի (այսուհետ՝ ՃՏՊ) մասին արձանագրությունը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը՝

1) արձանագրությունը կազմելու ամսաթիվը և ժամը, ինչպես նաև ՃՏՊ-ի մասին ընդհանուր տվյալներ,

2) ՃՏՊ-ին առնչություն ունեցող տրանսպորտային միջոցների, ճանապարհային նշանների և վնասված այլ գույքի մասին տվյալներ,

3) ՃՏՊ-ին առնչություն ունեցող վարորդների մասին տեղեկատվություն,

4) ՃՏՊ-ի վայրի և պայմանների մասին տեղեկատվություն,

5) ՃՏՊ-ին նախորդող պահին իրենց գործողությունների մասին վարորդների նշումները,

6) ՃՏՊ-ին առնչություն ունեցող վարորդների հայտարարությունները,

7) ՃՏՊ-ին առնչություն ունեցող վարորդների և արձանագրությունը կազմողի ստորագրությունները:

3. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության պետ, ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա.Խուդինյանին՝ մինչև 2024 թվականի հոկտեմբերի 20-ը.

1) «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության գործադիր տնօրենի հետ գրավոր համաձայնեցնել սույն հրամանի 1-ին կետով սահմանված փաստաթղթերի փոխանցման պայմանները (ժամկետները, եղանակը և այլն).

2) մշակել սույն հրամանի 1-ին կետով սահմանված փաստաթղթերի լրացման ուղեցույց և տրամադրել դրանք լրացնող անձնակազմին:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 55-Լ հրամանը:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2024 թվականի նոյեմբերի 1-ից: Մինչև 2024 թվականի դեկտեմբերի 1-ը կարող են օգտագործվել նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 55-Լ հրամանով սահմանված արձանագրության ձևաթղթերը:

Ոստիկանության գեներալ-մայոր ***Ա.Հովհաննիսյան***

Հաստատված է էլեկտրոնային
ստորագրությամբ 01.10.2024թ.

Հավելված 1
ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-ՆԳ նախարարի տեղակալի
2024 թվականի հոկտեմբերի 01-ի թիվ 15-Լ հրամանի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍՈՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐԻ (ՃՏՊ) ՄԱՍԻՆ

Արձանագրությունը կազմելու ամսաթիվը և ժամը				
	օր	ամիս	տարի	ժամ
1. ՃՏՊ մասին ընդհանուր տվյալներ				
1.1. ՃՏՊ ամսաթիվը և ժամը				
	օր	ամիս	տարի	ժամ
1.2. ՃՏՊ վայրի հասցեն				
	մարզ	քաղաք/գյուղ	փողոց (այլ կողմնորոշիչ հասցե)	

2. ՃՏՊ-ին առնչություն ունեցող տրանսպորտային միջոցների, ճանապարհային նշանների և վնասված այլ գույքի մասին տվյալներ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ 1			ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ 2	
☐ Լքել է ՃՏՊ վայրը	☐ Առկա է	ՏՄ առկայությունը	☐ Լքել է ՃՏՊ վայրը	☐ Առկա է
		Հաշվառման համարանիշը		
☐ Առկա չէ	☐ Առկա է _____ սերիան, համարը	Հաշվառման վկայագիր	☐ Առկա չէ	☐ Առկա է _____ սերիան, համարը
_____		ՃՏՊ վայրում երթևեկությունը կարգավորող ճանապարհային նշանները՝ ըստ ՃԵԿ-ի	_____	

ՃՏՊ-ի հետևանքով վնասված այլ գույք	☐ Առկա չէ	☐ Առկա է ՏՄ 1-ում _____
		☐ Առկա է ՏՄ 2-ում _____
		☐ Առկա է _____ հասցեում

3. ՃՏՊ-ին առնչություն ունեցող վարորդների մասին տեղեկատվություն

ՎԱՐՈՐԴ 1			ՎԱՐՈՐԴ 2	
		Անունը և ազգանունը		
☐ Առկա չէ	☐ Առկա է _____ սերիան, համարը	Վարորդական վկայական	☐ Առկա չէ	☐ Առկա է _____ սերիան, համարը
☐ Սթափ	☐ Ոչ սթափ	Վարորդի սթափություն	☐ Սթափ	☐ Ոչ սթափ
		Հեռախոսահամարը		

4. ՃՏՊ-ի վայրի և պայմանների մասին տեղեկատվություն

4.1. ՃՏՊ պահին տեսանելիությունը և եղանակային պայմանները	☐ Պարզ ցերեկային ☐ Պարզ գիշերային ☐ Ցերեկային մառախլապատ ☐ Գիշերային մառախլապատ	☐ Արևային ☐ Անձրևային ☐ Ձյուն ☐ Կարկուտ
4.2. ՃՏՊ վայրի ճանապարհային ծածկույթը	☐ Ասֆալտբետոնյա ☐ Ցեմենտբետոնյա ☐ Սալաքարային	☐ Մանրախիճ հիմնային ☐ Այլ _____
4.3. ՃՏՊ պահին ճանապարհի վիճակը	☐ Չոր ☐ Թաց ☐ Ձյունապատ	☐ Մերկասառույց ☐ Ծածկված կոշտացած ձյունով ☐ Այլ _____

Արձանագրությունը կազմեց		
	Անունը, ազգանունը, կրծքանշանի համարը	Ստորագրությունը

5. ՃՏՊ-ին նախորդող պահին իրենց գործողությունների մասին վարորդների նշումները						
	ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ 1			ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ 2		
5.1. ՏՄ-ների երթևեկության ուղղության վերաբերյալ	_____-ից (քաղաք, գյուղ և (կամ) փողոց կամ այլ կողմնորոշիչ) _____ (քաղաք, գյուղ և (կամ) փողոց կամ այլ կողմնորոշիչ)			_____-ից (քաղաք, գյուղ և (կամ) փողոց կամ այլ կողմնորոշիչ) _____ (քաղաք, գյուղ և (կամ) փողոց կամ այլ կողմնորոշիչ)		
5.2. ՏՄ-ների երթևեկության (գտնվելու) մասերը՝ ըստ գծանշումների կամ ՃԵԿ-ի *(հաշված փվյալ ուղղության երթևեկելի մասի աջ եզրից)*	☐ Առաջին գոտի ☐ Երկրորդ գոտի ☐ Երրորդ գոտի ☐ Չորրորդ գոտի	☐ Հինգերորդ գոտի ☐ Վեցերորդ գոտի ☐ Կողնակ ☐ Հանդիպակաց գոտի		☐ Առաջին գոտի ☐ Երկրորդ գոտի ☐ Երրորդ գոտի ☐ Չորրորդ գոտի	☐ Հինգերորդ գոտի ☐ Վեցերորդ գոտի ☐ Կողնակ ☐ Հանդիպակաց գոտի	
5.3. ՏՄ-ների վիճակի և վարորդների գործողությունների վերաբերյալ	☐ Երթևեկության սկիզբ ☐ Ուղիղ երթևեկություն ☐ Աջ վերադասավորում ☐ Ձախ վերադասավորում ☐ Անշարժ վիճակ ☐ Կայանված ☐ Աջ շրջադարձ ☐ Ձախ շրջադարձ ☐ Ինքնաբերաբար շարժվել	☐ Հետադարձ ☐ Հետընթաց ☐ Վազանց ☐ Կողանցում ☐ Արգելակում ☐ Կայանում ☐ Սահք ☐ Դուռը բացել ☐ Դուռը բաց		☐ Երթևեկության սկիզբ ☐ Ուղիղ երթևեկություն ☐ Աջ վերադասավորում ☐ Ձախ վերադասավորում ☐ Անշարժ վիճակ ☐ Կայանված ☐ Աջ շրջադարձ ☐ Ձախ շրջադարձ ☐ Ինքնաբերաբար շարժվել	☐ Հետադարձ ☐ Հետընթաց ☐ Վազանց ☐ Կողանցում ☐ Արգելակում ☐ Կայանում ☐ Սահք ☐ Դուռը բացել ☐ Դուռը բաց	
5.4. ՏՄ-ների բախման հաջորդականության վերաբերյալ՝ ըստ տվյալ վարորդի *(միայն ՃՏՊ-ին երկուսից ավել ՏՄ-ների առնչության դեպքում)*	1-ին բախում	ՏՄ ___	ՏՄ ___	1-ին բախում	ՏՄ ___	ՏՄ ___
	2-րդ բախում	ՏՄ ___	ՏՄ ___	2-րդ բախում	ՏՄ ___	ՏՄ ___
	3-րդ բախում	ՏՄ ___	ՏՄ ___	3-րդ բախում	ՏՄ ___	ՏՄ ___
5.5. Լուսային ազդանշանների վերաբերյալ	☐ Վթարային ազդանշան ☐ Հակամառախուղային լապտեր ☐ Հեռահար ☐ Թարթիչ աջ ☐ Կապույտ առկայծող փարոսիկ ☐ Կապույտ և կարմիր առկայծող փարոսիկ ☐ Հատուկ ձայնային ազդանշան	☐ Մոտակա ☐ Թարթիչ ձախ		☐ Վթարային ազդանշան ☐ Հակամառախուղային լապտեր ☐ Հեռահար ☐ Թարթիչ աջ ☐ Կապույտ առկայծող փարոսիկ ☐ Կապույտ և կարմիր առկայծող փարոսիկ ☐ Հատուկ ձայնային ազդանշան	☐ Մոտակա ☐ Թարթիչ ձախ	
5.6. Խաչմերուկ մուտք գործելու պահին լուսացույցի ազդանշանի վերաբերյալ *(կիրառվում է կարգավորվող խաչմերուկներում ՃՏՊ-ների դեպքում)*	☐ Կարմիր ☐ Կարմիր և դեղին ☐ Կանաչ ազատող	☐ Դեղին ☐ Չէր աշխատում ☐ Կանաչ վերսկսող		☐ Կարմիր ☐ Կարմիր և դեղին ☐ Կանաչ ազատող	☐ Դեղին ☐ Չէր աշխատում ☐ Կանաչ վերսկսող	
5.7. Այլ վարորդների նշումների վերաբերյալ համաձայնության (անհամաձայնության) վերաբերյալ	☐ Համաձայն եմ ☐ Համաձայն չեմ հետևյալ նշումներին՝			☐ Համաձայն եմ ☐ Համաձայն չեմ հետևյալ նշումներին՝		
	Կետը	Վարորդի այլ նշումը կետի վերաբերյալ		Կետը	Վարորդի այլ նշումը կետի վերաբերյալ	
5.8. ՃՏՊ-ի առաջացման մեջ իրենց մեղավորության վերաբերյալ (նախնական)	☐ Մեղավոր եմ ☐ Մեղավոր չեմ			☐ Մեղավոր եմ ☐ Մեղավոր չեմ		

6. ՃՏՊ-ին առնչություն ունեցող վարորդները սույնով հայտարարում են, որ ՃՏՊ-ի առաջացման մեջ իրենց մեղավորությունը հաստատվելու դեպքում համաձայն են, որ հատուցումից բխող հետադարձ պահանջի հիմքեր լինելու դեպքում դրա հետ կապված ծանուցումներն ուղարկվեն հետևյալ հասցեով (պատշաճ ծանուցման հասցե)՝

	Ծանուցման հասցե	

7. ՃՏՊ-ին առնչություն ունեցող վարորդները սույնով հայտարարում են (յուրաքանչյուրն իր նշումների մասով), որ ներկայացված տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը, և գիտակցում են, որ կեղծ տեղեկատվություն ներկայացնելու դեպքում օրենքով սահմանված կարգով կարող են ենթարկվել օրենքով նախատեսված, այդ թվում՝ քրեական պատասխանատվության, որի համար ստորագրում են՝

ՎԱՐՈՐԴ 1		ՎԱՐՈՐԴ 2
	Ստորագրությունը	

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍՈՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐԻ (ՃՏՊ) ՄԱՍԻՆ

(լիրառվում է միայն ՃՏՊ-ի ամբողջական տեսագրության առկայության դեպքում)

Արձանագրությունը կազմելու ամսաթիվը և ժամը				
	օր	ամիս	տարի	ժամ

1. ՃՏՊ մասին ընդհանուր տվյալներ

1.1. ՃՏՊ ամսաթիվը և ժամը	Ըստ կից տեսագրության		
1.2. ՃՏՊ վայրի հասցեն			
	մարզ	քաղաք/գյուղ	փողոց (այլ կողմնորոշիչ հասցե)

2. ՃՏՊ-ին առնչություն ունեցող տրանսպորտային միջոցների, ճանապարհային նշանների և վնասված այլ գույքի մասին տվյալներ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ 1			ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ 2	
☐ Լքել է ՃՏՊ վայրը	☐ Առկա է	ՏՄ առկայությունը	☐ Լքել է ՃՏՊ վայրը	☐ Առկա է
		Հաշվառման համարանիշը		
☐ Առկա չէ	☐ Առկա է _____ սերիան, համարը	Հաշվառման վկայագիր	☐ Առկա չէ	☐ Առկա է _____ սերիան, համարը
_____		ՃՏՊ վայրում երթևեկությունը կարգավորող ճանապարհային նշանները՝ ըստ ՃԵԿ-ի	_____	

ՃՏՊ-ի հետևանքով վնասված այլ գույք	☐ Առկա չէ	☐ Առկա է ՏՄ 1-ում _____
		☐ Առկա է ՏՄ 2-ում _____
		☐ Առկա է _____ հասցեում

3. ՃՏՊ-ին նախորդող պահին իրենց գործողությունների մասին վարորդների նշումները

	ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ 1	ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ 2
ՏՄ-ների երթևեկության ուղղության վերաբերյալ	_____-ից (քաղաք, գյուղ և (կամ) փողոց կամ այլ կողմնորոշիչ)	_____-ից (քաղաք, գյուղ և (կամ) փողոց կամ այլ կողմնորոշիչ)
	(քաղաք, գյուղ և (կամ) փողոց կամ այլ կողմնորոշիչ)	(քաղաք, գյուղ և (կամ) փողոց կամ այլ կողմնորոշիչ)

4. ՃՏՊ-ին առնչություն ունեցող վարորդների և մեղավորության մասին տեղեկատվություն և ստորագրություններ

ՎԱՐՈՐԴ 1			ՎԱՐՈՐԴ 2	
		Անուն, ազգանուն		
☐ Առկա չէ	☐ Առկա է _____ սերիան, համարը	Վարորդական վկայական	☐ Առկա չէ	☐ Առկա է _____ սերիան, համարը
☐ Սթափ	☐ Ոչ սթափ	Վարորդի սթափություն	☐ Սթափ	☐ Ոչ սթափ
		Հեռախոսահամար		
☐ Մեղավոր եմ ☐ Մեղավոր չեմ		ՃՏՊ-ի առաջացման մեջ իրենց մեղավորության վերաբերյալ (նախնական)	☐ Մեղավոր եմ ☐ Մեղավոր չեմ	

5. ՃՏՊ-ին առնչություն ունեցող վարորդները սույնով հայտարարում են, որ ՃՏՊ-ի առաջացման մեջ իրենց մեղավորությունը հաստատվելու դեպքում համաձայն են, որ հատուցումից բխող հետադարձ պահանջի հիմքեր լինելու դեպքում դրա հետ կապված ծանուցումներն ուղարկվեն հետևյալ հասցեով (պատշաճ ծանուցման հասցե)՝

	Ծանուցման հասցե	

6. ՃՏՊ-ին առնչություն ունեցող վարորդները սույնով հայտարարում են (յուրաքանչյուրն իր նշումների մասով), որ ներկայացված տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը, և գիտակցում են, որ կեղծ տեղեկատվություն ներկայացնելու դեպքում օրենքով սահմանված կարգով կարող են ենթարկվել օրենքով նախատեսված, այդ թվում՝ քրեական պատասխանատվության, որի համար ստորագրում են՝

ՎԱՐՈՐԴ 1		ՎԱՐՈՐԴ 2
	Ստորագրությունը	

Արձանագրությունը կազմեց		
	անունը, ազգանունը, կրծքանշանի համարը	ստորագրությունը

Հավելված 2
ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-ՆԳ նախարարի տեղակալի
2024 թվականի հոկտեմբերի 01-ի թիվ 15-Լ հրամանի

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍՈՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐԻ (ՃՏՊ) ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Նյութական վնասով ՃՏՊ-ի հանգամանքների տեխնիկական ելակետային տվյալների կազմն ու կառուցվածքը պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.

1) պետք է կազմված լինի ՃՏՊ վայրի սխեմա՝ ձեռքով կամ համակարգչային եղանակով, որտեղ արտացոլվում են ստորև տվյալները (նշումները)՝

ա. ՃՏՊ-ին առնչվող ճանապարհի (ների) (պողոտա, փողոց, նրբանցք և այլն) անվանումը, իսկ միջբակային տարածքի (ճանապարհի) դեպքում՝ բակային տարածք նշումը,

բ. ՃՏՊ-ին առնչվող ճանապարհի (ների) (պողոտա, փողոց, նրբանցք և այլն) լայնությունը,

գ. ՃՏՊ-ի վայրում կատարված և ՃՏՊ-ի վրա ազդեցություն ունեցած գծանշումները (առկայության դեպքում), իսկ կարգավորողի առկայության դեպքում՝ կարգավորողի կարգադրություններն ու ազդանշանները ՃՏՊ-ին նախորդող պահին,

դ. ՃՏՊ-ի վայրում տրանսպորտային միջոցների հետվթարային դիրքերի սխեմատիկ պատկերն՝ ըստ տրանսպորտային միջոցների ուղղությունների և հաշվառման համարանիշերի,

ե. ՃՏՊ-ի վայրում տրանսպորտային միջոցների հետվթարային դիրքերն անշարժ կողմնորոշիչի և միմյանց նկատմամբ, իսկ եթե որևէ պատճառով տեղի է ունեցել վթարին մասնակից տրանսպորտային միջոցի (ների) տեղաշարժ՝ նշումներ այդ մասին՝ հայտնի լինելու դեպքում (վարորդի հայտարարություն կամ այլ հիմքեր) գրառելով նաև վերջիններիս պատճառները,

զ. ՃՏՊ-ի հետևանքով առաջացած հետքերի առկայության դեպքում (արգելակային, քերծվածք, սահք, հեղուկ, հող և այլն) դրանց սխեմատիկ արտապատկերումը և հեռավորությունը (չափային տվյալները) սույն ենթակետի «ե» պարբերությամբ նախատեսված միևնույն անշարժ կողմնորոշիչի նկատմամբ,

է. ՃՏՊ-ի հետևանքով տրանսպորտային միջոցից պոկված (շպրտված) իրերի առկայության դեպքում (արգելակային, քերծվածք, սահք, հեղուկ, հող և այլն) դրանց սխեմատիկ արտապատկերումը և հեռավորությունը (չափային տվյալները) սույն ենթակետի «ե» պարբերությամբ նախատեսված միևնույն անշարժ կողմնորոշիչի նկատմամբ,

ը. երթևեկելի մասում խոչընդոտների (փոսեր, տրանսպորտային միջոցներ, այլ առարկաներ և այլն) առկայության դեպքում՝ դրանց չափերը, խորությունը, դրանց սխեմատիկ արտապատկերումը և հեռավորությունը (չափային տվյալները) սույն ենթակետի «ե» պարբերությամբ նախատեսված միևնույն անշարժ կողմնորոշիչի նկատմամբ.

2) պետք է ՃՏՊ վայրում առնվազն հինգ տարբեր դիրքերից կատարված լինեն լուսանկարներ, որոնք առնվազն արտացոլում են՝

ա. պատահարից հետո պատահարին մասնակից բոլոր ավտոտրանսպորտային միջոցների դիրքերն անշարժ կողմնորոշիչների և միմյանց նկատմամբ (ընդ որում դա պետք է կատարվի այնպես, որ դրանցից գոնե մեկում տեսանելի լինեն նաև ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերը),

բ. պատահարից վնասված ավտոտրանսպորտային միջոցների վրա առկա մեխանիկական վնասվածքները.

3) եթե ՃՏՊ հետևանքով ավտոտրանսպորտային միջոցներից բացի վնասվել է նաև այլ գույք, ապա պետք է կատարված լինեն տվյալ վնասված գույքի՝ առնվազն երկու տարբեր դիրքերից լուսանկարներ.

4) եթե ՃՏՊ-ում ներգրավված է ՀՀ և ԱՀ իրավասու պետական մարմինների կողմից չհաշվառված ավտոտրանսպորտային միջոց, ապա պետք է կատարված լինեն տվյալ ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի կամ նմանատիպ այլ փաստաթղթի լուսանկարները:

2. Սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված ՃՏՊ վայրի սխեմային, ինչպես նաև սույն հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված լուսանկարներին կարող է փոխարինել՝

1) ՃՏՊ-ի ամբողջական տեսագրությունը, որտեղ հստակ երևում են ՃՏՊ-ի մեխանիզմը և տրանսպորտային միջոցների շարժման ուղղությունները, իսկ ՃՏՊ-ն կարգավորվող խաչմերուկում տեղի ունեցած լինելու դեպքում՝ նաև ավտոտրանսպորտային միջոցների՝ խաչմերուկ մուտք գործելու պահին համապատասխան լուսացույցի (լուսացույցերի) ազդանշանը (ազդանշանները), և (կամ)

2) անօդաչու թռչող սարքի միջոցով վերևից կատարված ՃՏՊ վայրի՝ Ճանապարհային ոստիկանության և Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի միջև համաձայնեցված տեխնիկական պահանջներին բավարարող ամբողջական տեսագրությունը, որն արտացոլում է ՃՏՊ-ի վայրի և դրանում տրանսպորտային միջոցների հետ կապված ՃՏՊ վայրի սխեմայում ներառման ենթակա ելակետային տվյալները:

3. Սույն հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տեսագրությունը կարող է փոխարինել նաև սույն հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նախատեսված լուսանկարներին: